# Տ Ա Ր Ե Կ Ա Ն  Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2019 թ. գիտական հետազոտությունների և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2019 թ. գործունեության կարևորագույն արդյունքներից են՝**

**«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2»** գիտական թեմայի /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/ շրջանակներում՝

ա. Մեծ Սեպասարում պեղումների արդյունքում հայտնաբերվեցին ամպրոպի աստծուն և պտղաբերության աստվածուհուն խորհրդաշող կոթողներ, որոնց ծիսական խորհուրդը աշխարհի գոյության բնականոն և անխափան ընթացքի ապահովումն էր, ինչը իրականացվում էր առ երկինք ուղղված նվիրաբերում-զոհաբերություններով՝ երկրի վրա մարդկանց, կենդանիների ու հողի համար պտղաբերում և հովանավորություն ստանալու նպատակով:

**բ.** Ջրափիի դամբարանադաշտերի պեղումները նոր նյութ տվեցին Ախուրյանի ափամերձ տարածքներում վաղ երկաթի ժամանակաշրջանում բնակավայրերի տեղադրության, բնակավայր-դամբարանադաշտ հարաբերակցության, բնակչության խտության, տնտեսական բարձր մակարդակի, թաղման ձևերի, ծեսի, նյութական ու հոգևոր մշակույթի ընդհանրության ուսումնասիրության համար:

գ. Ազատանի ամրոց-բնակավայր-դամբարանադաշտի արևելյան հատվածում հայ-գերմանական համատեղ արշավախմբի կատարած պեղումների արդյունքում հայտնաբերվեց աքեմենյան ժամանակաշրջանին բնորոշ, բարձրորակ, ջարդված խեցեղեն և բաժակներ, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ Աքեմենյան թագավորության վերելքի շրջանում ազատանցիների վերնախավը փորձել է ընդունել զավթիչների կենսակերպը:

դ. Հիմնովին ժխտվեց Արևելագիտության մեջ իշխած այն կարծիքը, թե Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կեսի բնակիչ ցեղերի մեծ մասը նախաուրարտական և ուրարտական դարաշրջաններում ունեցել են խուռիական ծագում կամ ազգակից են եղել խուռի-ուրարտական ցեղերին և նույնիսկ ունեցել են (գոնե մասամբ) քարթվելական ծագում: Տեղանվանական տվյալները և դրանցում արտացոլված պաշտամունքային ոլորտի պատկերացումները խոսում են տեղի բնակչության հնդեվրոպական ծագման մասին:

## 2. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2019թ.

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2019թ. շարունակել է իրականացնել **«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2»** գիտահետազոտական ծրագիրը /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/:

**Հնագիտության գծով-** 2019թ. պեղումներ իրականացվել են Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան հնագիտական հուշարձանում, Ջրաձորում և Թավշուտում: Ավարտվին են հասցվել Ջրափիի ջրասույզ դամբարանադաշտերի փրկարարական պեղումները: Հայ-գերմանական համատեղ արշավախմբի կազմում պեղումներ են կատարել նաև Ազատանի Ք.ա. XIII-VIIIդդ. ամրոց-բնակավայր-դամբարանադաշտի տարածքում: Սեպտեմբերին փրկարարական պեղումներ են կատարվել նաև մարզի Լեռնակերտ գյուղի տարածքում բացված վաղ բրոնզիդարյան բնակավայրում:

**Պատմագիտության գծով-** 2019թ. անդրադարձ է կատարվել լույսի պաշտամունքի էթիունյան վայրերին, հայ-փոքրասիական հարաբերություններին, պաշտամունքային կապերին և խորհրդանշանների միջև նկատվող ընդհանրություններին: Շարունակվել է պատմական Տայքի և հարակից տարածքների պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը, քննվել են 1914-1918թթ. Ալեքսանդրապոլի գավառ անցած գաղթականների թվաքանակի, գաղթականության ընդունման ժամանակ առաջացած խնդիրների, գավառում նրանց ունեցած սոցիալական վիճակին վերաբերող հարցերը: Առանձին քննության առարկա են դարձել Ալեքսանդրապոլի գավառի 1918-1920թթ. Պատմության տարընկալումները, շրջանառության մեջ է դրվել գավառի կրթամշակութային կյանքի վերաբերյալ արխիվային մեծաքանակ նյութ, պարբերական մամուլի մանրազնին ուսումնասիրմամբ բացվել է հայ ազատագրական-գաղափարական պայքարի նոր՝ մշակութաբանական շերտ: Ներկայացվել են XXI դարասկզբին տարածաշրջանի բնակչության թվի շարժընթացի, սեռատարիքային կազմի, բնական վերարտադրության և միգրացիայի փոփոխության ընթացքի մասին ժողովրդագրական բնույթի նոր տվյալներ:

**Ազգագրության գծով-** 2019թ. անդրադարձ է կատարվել Ալեքսանդրապոլի խաղային մշակույթին, լուսաբանվել է խաղի դերը և նշանակությունը երեխաների հասունացման և սոցիալականացման գործընթացում, վերլուծվել են խաղի սոցիոկարգավորիչ գործառույթները և դրա հարաբերությունները տոնական ծիսաշարի արարողակարգում, ուսումնասիրվել են հայ ժողովրդական տոները, սովորույթները, հավատալիքները և արդի ժամանակներում տոնական մշակույթի կրած փոփոխությունները Շիրակի մարզում: Իրականացվել են բանահավաքչական աշխատանքներ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի տարբեր համայնքներում, ուսումնասիրվել են քաղաքային ժողովրդական երգերի ժանրային և երաժշտատիպաբանական առանձնահատկությունները,

**Բանագիտության գծով-** 2019թ. Ուսումնասիրվել են բանահյուսական լեզվամտածողության ուրույն դրսևորումները գրական միջավայրում, քննվել են Գյումրու արդի խոսվածքի ձևաբանական իրողությունները պատմական զարգացման մեջ:

2019-ին Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ հրատարակվել են ժողովրդական երգերի 1 ժողովածու /40 էջ/, Կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերականի 22-րդ հատորի երկու պրակները /306 էջ/, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազ-

գային գիտաժողովի նյութերի ժողովածուն /534 էջ/, 51 գիտական հոդված /10-ը՝ արտերկրում/, գիտաժողովների 28 զեկուցում /4-ը՝ արտերկրում/:

Իրականացվել են՝ «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով 10-րդ միջազգային եռօրյա գիտաժողովը՝ 149 մասնակիցներով /25-ը արտերկրից/, 3 հնավայրերի պեղումներ, 2 ազգագրական գիտարշավներ և 23 գիտական սեմինարներ: ՇՀՀ կենտրոնի գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ հաշվետու տարում գործել են ֆեյսբուքյան էջը և համացանցում տեղադրված երկլեզվյա կայք-էջը /www.shirakcenter.sci.am/:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյան

գիտքարտուղար Ա. Ակոպով

3. **Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները 2019թ**.

2018թ. սեպտեմբերից կենտրոնում իրականացվում են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2018» մրցույթով անցած երկամյա ժամկետով երկու թեմաներ.

«1**918-1921 թթ. իրողությունները Շիրակի բնակչության պատմական հիշողության համատեքստում»** գիտական թեմայի /ղեկ.՝ պ.գ.թ. Կ.Բազեյան/ առաջին տարում հետազոտող խումբն ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ առկա գրականությունը և հավաքչական աշխատանքներ կատարել Հայաստանի ազգային արխիվում, Եղիշե Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանների ֆոնդերում, ինչպես նաև Աջարիայի կառավարության առընթեր Բաթումիի պետական արխիվում: Դաշտային հավաքչական աշխատանքներ են կատարվել Շիրակի մարզի Ամասիայի, Աշոցքի, Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում և Գյումրի քաղաքում, որին զուգընթաց իրականացվել է նաև թեմայի հետ կապված կոնկրետ դեպքերին առնչվող տեղավայրերի արձանագրում, պատրաստվել և հրատարակության է ներկայացվել 2 գիտական հոդված:

**«Ժողովրդագրական գործընթացները Ալեքսանդրապոլի գավառում 20-րդ դարի առաջին քսանամյակում**I / թեմայի ղեկավար՝ պ. գ. թ. Ա. Հայրապետյան/ թեմայի շրջանակներում հետազոտող խմբի կողմից Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերում կատարվեց Ալեքսանդրապոլի գավառի 1900-1918 թթ. ժողովրդագրական դրությանը վերաբերող արխիվային նյութի հավաքում և վերլուծություն: Մեծ աշխատանք տարվեց Առաջին աշխարհամարտի տարիներին եղեռնից մազապուրծ արևմտահայ գաղթականության՝ գավառի տարածքում տեղաբաշխման ու ներգաղթից հետո գավառի ժողովրդագրական դրությանը վերաբերող արխիվային նյութերի հավաքման և վերլուծման ուղղությամբ: Լուրջ քայլեր կատարվեցին թուրքական զորքերի կողմից գավառի առաջին զինագրավման (1918թ. մայիսի-նոյեմբեր) պատճառների, թուրք նվաճողների կողմից այստեղ տարվող վարչաժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունների ուսումնասիրության ուղղությամբ: Ժխտվեց Հայագիտության մեջ ընդունված այն տեսակետը, թե 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին թուրքերի կողմից զինագրավված Ալեքսանդրապոլի գավառում զոհվել է 12.000 և գերվել՝ 6.000 մարդ: Արխիվային վավերագրերի, ժամանակակիցների հուշերի և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ ապացուցվեց, որ թուրքական տիրապետության ընթացքում Ալեքսանդրապոլում, Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերում կոտորվել է մոտ 20.000 մարդ, 6000-ը զոհ է գնացել սովին ու համաճարակային հիվանդություններին, ևս 15000-ը անվերադարձ գերվել է: Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել և հրատարակության է ներկայացվել 8 գիտական հոդված:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյան

գիտքարտուղար Ա. Ակոպով

**4. –**

**5. 2019 թ. հրապարակումների ցանկ**

**Մենագրություններ, ժողովածուներ**

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, հ. 22, պրակ 1-2, Գյումրի, 2019, 306 էջ:
2. «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան-Գյումրի, «Գիտություն» հրատ., 2019, 534 էջ:
3. Հարությունյան Հ., Ժողովրդական երգերի ժողովածու, Գյումրի, 2019, 40 էջ:

**Հոդվածներ, զեկուցումներ**

1. Ալեքսանյան Կ.Վ, Թուրքական ժխտողականությունը Կովկասում/1917-1918/, Հայկազեան Հայագիտական հանդէս, Բեյրութ, 2019, h.39, էջ 289-312:
2. Ալեքսանյան Կ.Վ, Փաստաթղթեր Ալեքսանդրապոլի գավառի կրթամշակութային կյանքի վերաբերյալ /1917-1920թթ./, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2019, էջ 26-66:
3. Բազեյան Կ.Ռ., Օձ-վիշապը XVIII-XIX դդ. հայկական ասեղնագործության մեջ, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն, Երևան 2019, էջ 324-334:
4. Հայրապետեան Ա.Ս., Դրուագներ Ալեքսանդրապոլի ՀՅԴ Կառոյցի՝ Երկիր զինամթերք փոխադրելու գործունեութիւնից, Հայկազեան Հայագիտական հանդէս, h. 39, Պէյրութ, 2019, էջ 119-134:
5. Հայրապետյան Ա.Ս., Օսմանյան ցեղասպանական քաղաքականության շարունակությունը Ղարաքիլիսայի շրջանում (1918թ, մայիս-հոկտեմբեր), «Միջազգային գիտաժողով նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին և Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին, Վանաձոր, 6-7 հունիսի, 2019, էջ 254-262:
6. Վարդանյան Բ.Վ., Անվավոր փոխադրամիջոցին պատկանող մի առարկայի՝ երիթակի շուրջ. հնագիտական և ծիսական համատեքստի վերականգման փորձ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Երիտասարդ գիտնականների 16-րդ միջազգային գիտաժողով, Երևան, 20-22 նոյեմբեր, 2019, Երևան, «Գիտություն» հրատ., էջ 18-20:
7. Վարդանյան Բ.Վ.,Անվավոր փոխադրամիջոցներով ուշ բրոնզեդարյան թաղումների սոցիալ-ժողովրդագրական հետազոտության խնդիրները Կուրարաքսյան Միջագետքում, Լրաբեր հասարակական գիտությունների, (Երևան), №1 (110), էջ 334-349:

8. Аганян Г.Т., Городские цехи (эснафства) в системе соционормативной культуры Александрополя, «Наследие Великой степи», «Научный ежегодник», Выпуск 2, Изд.Музей истории Казахстана, Нур-Султан, 2019, С. 76-83.
9. Айрапетян А.С., Акопов А.А., Проблема беженцев в годы Первой мировой войны (на примере Александропольского уезда), «Наука и общество в условиях глобализации», Материалы VI Международной научно-практической конференции, Уфа, 2019, с. 4-8.
10. Петросян Л.С., Греческие и армянские источники про царя Ардоатес, «Наука и современное общество: взаимодействие и развитие», Материалы VI Международной научно-практической конференции, Уфа, 2019, с. 25-30.
11. Akopov A., Administrative and demographic picture of Tortoum region (from the 16th century up to 1878), "Historical Tayk'. History, Culture, Confession" collected papers, Mother See of Holy Echmiadzin, 2019, pp. 435-450.
12. **Vardanyan B., Yeganyan L.,** Chuan-Chao W., Reinhold S., Kalmykov A…(2019) Ancient human genome-wide data from a 3000-year interval in the Caucasus corresponds with ecogeographic regions, Nature Communications, Vol. 10, Article num: 590. https://www.nature.com/articles/s41467-018-08220-8#Abs1
13. Hayrapetyan A., Russian immigrants in the province of Alexandrapol: Episodes from the policy of russianization of the Eastern Armenia /From the second half of the XIX century to the XX centuries/, Tbilisi, Archeion, N XVIII, 2019, p. 38-44.
14. Hayrapetyan A., The Social Situation of Migrants in the Province of Alexandrapol in 1914-1920, Yerevan, "Review of Armenian studies", N 2 (19), 2019, p. 17-29.
15. Khudaverdyan A., Manukyan S., **Vardanyan B.,** Shakhmuradyan M. (2019), Resorption of the alveolar region in Facies leprosy: a paleoanthropological and paleopathological analysis (Aragatsavan, Armenia), Bulletin of the International Association for Paleodontology, 2019 №3 (1), pp. 1-17.
16. Khudaverdyan A., Palandjyan R., **Eganyan L., Khachatryan H.,** Anthropology Of Human Remains Of The Classical/Late Antiquity Period From Firmi Bakher And Vartaqar Sites, Armenia Anthropologie, LVII/2, Antropos institute, Brno, 2019, pp. 189–213.
17. Khudaverdyan A., Yengibaryan A., Hovhanesyan A., Khachatryan H., Yeganyan L., A Case Of Osteomalacia In Human Skeletal Remains From St Hripsime Church (Horom, Armenia), Papers On Anthropology XXVIII/2, Tartu, 2019, pp. 28–44.
18. Matikyan H., Lullaby as an Awakening Text, 2nd International Conference "Advanced Research in Humanities", Milan, Italy, 30.10.2019-01.11.2019, pp. 1-5, (https://www.dpublication.com/wp-content/uploads/2019/10/ICARH-2-811.pdf):

**ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, հ. 22, պրակ 1-2, Գյումրի, 2019, 306 էջ:**

1. Ալեքսանյան Կ.Վ., Ալեքսանդրապոլի գավառի կրթամաշակութային կյանքը 1917-1920թթ, էջ 109-124:
2. Ակոպով Ա.Ա., Ոսկանյան Դ.Ս., Արխիվային վավերագրեր Ալեքսանդրապոլի գավառի մասին (XX դարի սկիզբ), էջ 72-109:
3. Այվազյան Գ.Ս., «Հայելի»-ն Ալեքսանդրապոլի առաջին երգիծաթերթ, էջ 125-137:
4. Ավագյան Ի.Է., Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես մշակութային պահպանական միավոր, Էջ 149-160:
5. Բազեյան Կ.Ռ., Խաղը Ալեքսանդրապոլի ավանդական մշակույթում, էջ 239-244:
6. Բոյաջյան Ա.Ա., Շիրակի բնակչության շարժի օրինաչափությունները XX դ., էջ 271-286:
7. Հայրապետյան Ա.Ս., Դրվագներ XXդ սկզբին Ալեքսանդրապոլի գավառում մոլեգնած տարափոխիկ հիվանդությունների պատմությունից, Գյումրի, էջ 52-71:
8. Հայրապետյան Ս.Ա., Լրատու, էջ 291-300:
9. Հովհաննիսյան Ռ., Լրատու, էջ 288-291:
10. Մատիկյան Հ.Հ., Հովհ. Թումանյանի ստեղծագործությունները որպես քնամուտի տեքստեր, Էջ 265-271:
11. Պետրոսյան Ս.Գ., Լուսի պաշտամունքի էթիունյան վայրերը, էջ 5-19:
12. Վարդանյան Բ.Վ., Մկրտչյան Լ., Տիրաշենի մշակութային լաղշաֆտը: Նախնական դիտարկումներ, էջ 194-202:
13. Ֆուրթվենգլեր Ա., Գյութե Մ., Մաուրման Դ. (Գերմանիա), **Խաչատրյան Հ.Հ., Եգանյան Լ.Գ.**,. Ջրափիի դամբարանադաշտերի 2013-2017 թթ. պեղումները, էջ 161-193:

**Հոդվածները հրատարակվել են «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Երևան-Գյումրի, «Գիտություն» հրատ., 2019, 535 էջ:**

1. Ալեքսանյան Կ.Վ., Ալեքսանդրապոլի գավառի պատմության տարընկալումները /1918-1920/, էջ 78-81:
2. Ակոպով Ա.Ա., Խոտորջուրը 19-րդ դ. 2-րդ կեսին, էջ 84-89:
3. Այվազյան Գ.Ս., Յ.Վ.Գյոթեի «Ֆաուստ»-ի բեմադրությունն Ալեքսանդրապոլում, էջ 92-95:
4. Ավագյան Ի.Է, Զաքարյան Պ., Ալեքսանդրապոլ-Գյումրու մեմորիալ մշակույթը, էջ 371-376:
5. Ավագյան Ի.Է, Վարդբաղի դամբարանադաշտի թվագրության շուրջ, էջ 12-15:
6. Բազեյան Կ.Ռ., Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղն ու մշակույթը XIXդ. վերջի – XX դարասկզբի լուսանկարներում, էջ 235-238:

7. Բոյաջյան Ա.Ա., Շիրակի բնակչության շարժի օրինաչափությունները XX դ., էջ 238-243:
8. Խաչատրյան Հ.Հ., Եգանյան Լ.Գ., Անտիկ ժամանակաշրջանի նորահայտ դամբարանների պեղումներ Շիրակում 2008-2016թթ., էջ 28-31:
9. Հայրապետյան Ա.Ս., Երկու խոսք, էջ 5-6:
10. Հայրապետյան Ա.Ս., Պաղվալի Վաղո. ազատագրական պայքարի ընդհատակի լեգենդը, էջ 137-141:
11. Հայրապետյան Ս.Ա., Տեղաշարժեր Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի քերականական համակարգում, էջ 463-470:
12. Հարությունյան Հ.Հ., Կոմիտասը և Ալեքսանդրապոլի աշուղական ավանդույթները, էջ 396-398:
13. Հովհաննիսյան Ռ.Պ., Տյառընդառաջի ծիսատոնական սովորույթներն ու ժողովրդական հավատալիքները Շիրակում, 2019, էջ 302-306:
14. Մատիկյան Հ.Հ., Մանկական բանահյուսության ընդհանուր նկարագիրը ժողովրդական բանահյուսության համատեքստում (հայ և անգլալեզու լեզվամշակույթներում), էջ 312-315:
15. Մելիք-Ադամյան Հ., Խաչատրյան Հ., Ճարտարապետ Դավիթ Չիսլյանի (Չիսլիեվ) Ավանդը Արթիկ տուֆի օգտագործման եւ հանրահռչակման մեջ, էջ 54-58:
16. Մելքոնյան Վ.Ս., Ալեքսանդրապոլ-Լենինականի տնտեսությունը ըստ պարբերական մամուլի նյութերի, էջ 315-319:
17. Պետրոսյան Լ.Ս., Հայաստանում Քսենոփոնի հիշատակած թարգմանի մասին, էջ 197-200:
18. Պետրոսյան Ս.Գ., Առասպելաբանված եղջյուրի և միեղջյուրի մասին, էջ 201-204:
19. Սահակյան Կ.Ա., «Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ» (Զատկական տոների ժողովրդական ավանդույթը Գյումրիում), էջ 333-336:
20. Վարդանյան Բ.Վ., Մարդու աճյուն չպարունակող դամբաններն ՈՒշ բրոնզի և Վաղ երկաթի դարում, էջ 61-64:
21. Ֆուրթվենգլեր Ա., Գյութե Մ., Մաուրման Դ., Թիեթզ Ա., (Գերմանիա), **Խաչատրյան Հ.Հ., Եգանյան Լ.Գ.,** Պետրոսյան Լ.Ա., Պեղումներ Ազատանում- Ք.Ա. 1-ԻՆ հազարամյակի Շիրակի մի բնակավայրի մասին, էջ 47-51:

## 6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Տնօրեն՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Ս. Հայրապետյան,
Գիտքարտուղար՝ պ. գ. թ. Ա. Ա. Ակոպով,
Էլեկտրոնային փոստ՝ info@shirakcenter.sci.am, hkentron@mail.ru,
Կայքէջ՝ www shirakcenter.sci.am

**7.** ---

**8**. Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

**9.** ---

**10**. –ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստի-տուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՃՇԱՀ, ՎՊՀ, ՇՊՀ-ի մի շարք հայագիտական ամբիոնների, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան հին ձե-ռագրերի ինստիտուտ, Կոմիտասի թանգարան–ինստիտուտ, Կումայրի պատմամշա-կութային արգելոց-թանգարան, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության թան-գարան–ինստիտուտ, Հայոց ազգագրության, Հայաստանի պատմության ազգային, Գյումրու երկրագիտական եւ ժող. ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, ԳԱԹ-ի և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ:

Համատեղողների թիվը՝ 5 /ՇՊՀ/, 2 /ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ/, 3 /ՇԵԹ/:

2019թ. համատեղ 9 հրապարակումներ են եղել. Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի /5/, Հալեի համալսարանի գերմանական հնագիտական արշավախմբի /2/, ՃՇԱՀ /1/, ՇՊՀ պատմության ամբիոնի /1/ հետ:

ՇՀՀ կենտրոնի տնօրենի՝ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

գիտքարտուղար՝ Ա. ԱԿՈՊՈՎ

Աղյուսակ 1

## 2019թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

| N | Կազմակերպությունը | Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Նպատակային ֆինանսավորում | Բազային ֆինանսավորում | Թեմատիկ ֆինանսավորում | Տնտ. Պայմանագրեր |
| 1 | «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ | | 1 | 3 | |
| | | | 30980.5 | 7729.2 | |

Աղյուսակ 2

Աղյուսակ 3

## Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

| N | Միջոցառման անվանումը | Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները | Մասնակիցների թիվը | |
|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | Այդ թվում՝ արտերկրից |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Կլոր սեղան քննարկում. Համբարձման տոնի ժողովրդական սովորույթները Շիրակում | Գյումրի, 7 հունիսի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Գյումրու գեղագիտական կենտրոն | 24 | |
| 1. | Հանրապետական գիտական ընթերցումներ՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյակին | Գյումրի, 7 հունիսի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ | 5 | |
| 2 | «Բարենպատակ ընկերության» հիմնադրման 150-ամյակին նվիրված հանրապետական գիտական ընթերցումներ | Գյումրի, 8-9 օգոստոսի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ՇՊՀ, Եվրոպական համալսարանի մասնաճյուղ | 10 | |
| 3 | «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը.հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 10-րդ գիտաժողով | Գյումրի, 27-29 սեպտեմբեի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն | 152 | 25 |
| 4 | Միջազգային գիտական ընթերցումներ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության անկման 100-ամյակին | Գյումրի, 18 նոյեմբերի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Ազգային արժեք ակումբ | 7 | 2 |
| 5 | Հեքիաթի տեքստի պոետիկա (զրույց, քննարկում) | Գյումրի, 29 նոյեմբերի ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ԳԱԱ ԵԻՄԻ | 16 | |

Աղյուսակ 4

## Աշխատակիցների արտասահմանյան (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումները

| N | Կազմակերպու-Թյունը | Երկիրը | Գործուղված գիտնականների քանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողովներին մասնակցելու | Համատեղ գիտական աշխատանք կատարելու | Բանակցութ-յունների և քննարկումնե րի համար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | «Շիրակի հայագիտա-կան հետազոտու-թյունների կենտրոն» ՊՈԱԿ | Իտալիա,<br>Վրաստան,<br>ՌԴ | 1<br>2<br>2 | 1<br><br>2 | <br>2<br> |

Աղյուսակ 5

## կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը

| N | Կազմակերպու-Թյունը | Երկիրը | Ընդունված գիտնականների քանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողով-ներին մասնակցելու | Համատեղ գիտական աշխատանք կատարելու | Բանակցութ-յունների և քննարկումնե րի համար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | «Շիրակի հայագի-տական հետազո-տությունների կենտրոն» ՊՈԱԿ | **ՌԴ,** | **8** | | **3** |
| | | **Ֆրանսիա** | **2** | **1** | |
| | | **Թուրքիա,** | **1** | | |
| | | **Գերմանիա,** | **5** | **4** | **2** |
| | | **Վրաստան,** | **2** | | **2** |
| | | **Հունաստան,** | **1** | | |
| | | **Ղազախստան,** | **1** | | **1** |
| | | **Թուրքմանստան,** | **2** | | |
| | | **Նիդերլանդներ,** | **1** | | |
| | | **Ուկրաինա,** | **2** | | |
| | | **ԱՄՆ** | | | **1** |

\- Աղյուսակ 6

Աղյուսակ 7

## ԳԱԱ գիտաշխատողների 2019թ. հրապարակումների ընդհանուր քանակը

| N | Կազմակերպությունը | Մենագրություննե ր, ժողովածուներ, գրքեր | | Ուսումնական ձեռնարկ, դասագիրք | | Հոդվածներ, զեկուցումներ | | Թեզիսներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հանրա պետ. | Արտաս ահմ. | Հանրա պետ. | Արտաս ահմ. | Հանրա պետ. | Արտա սահմ. | Հանրա պետ. | Արտա սահմ. |
| 1 | 2 | 3 | 4 | | 5 | | | 6 | 7 |
| | «ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ | 3 | | - | - | 41 | 10 | 2 | |

Աղյուսակ 8

Աղյուսակ 9

## Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2020թ.

| N | Կազմակերպությունը | Աշխատող ների ընդհանուր թիվը | Գիտական աշխատող ների թիվը | ԳԱԱ ակադեմի-կոսներ | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ | Գիտության դոկտորներ | Գիտության թեկնածուներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | «ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ | 22 | 19 | | | 2 | 12 |

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրենի՝ Ա. Հայրապետյան

# ГОДОВОЙ ОТЧЕТ

## Об основных результатах научной и научно-организационной деятельности 2019г. Ширакского центра арменоведческих исследований НАН РА

**1. Основные результаты деятельности ШЦАИ НАН РА за 2019г. следующие:**

**В рамках научной темы «Археологические и историко-культурные исследования Ширака-2» (рук. к.ист.н. А.Айрапетян).**

а. В Мец Сепасаре в результате раскопок обнаружены памятники, символизирующие бога грозы и богиню плодородия, ритуальный смысл которых заключался в обеспечивании естественного и беспрерывного существования мира, что осуществлялось в обращении к небесам путем пожертвований и жертвоприношений, для получения покровительства и плодородия для людей, животных и земли.

б. Раскопки некрополя Джрапи дали новый материал для исследования в прибрежных районах Ахуряна в эпоху раннего железа соотношения поселение-некрополь, плотности населения, высокого экономического уровня, видов захоронений, ритуалов, общности материальной и духовной культуры.

в. В Восточной части некрополя крепость-поселения Азатана в результате раскопок, сделанных совместной армяно-немецкой экспедицией, были обнаружены характерные акэменитской эпохе высококачественные, разбитые керамические изделия и чаши, что позволяет предположить, что элита азатанцев в период развития Акеменидского царства приняло образ жизни захватчиков.

г. Полностью отверглось принятое в Востоковедении предположение о том, что большинство племен северо-восточной части Армянского Нагорья в доурартском и урартском периодах имели хурийское происхождение или были родственны с хури-урартскими племенами и даже имели (хотя бы частично) картвелийское происхождение. Топонимические данные и выраженные в них культовые представления говорят об индоевропейском происхождении местного населения (рук. д.ист.н. С. Петросян).

## 2. Основные результаты по базовому финансированию в 2019 году

По археологии-в 2019г. были проведены раскопки археологического памятника эпохи ранней бронзы Мец Сепасара, в Джрадзоре и Тавшуте. Завершены спасательные раскопки потопленных некрополей Джрапи.

В составе совместной армяно-немецкой экспедиции группа провела раскопки также в районе некрополя крепости-поселения Азатана XIII-VIII вв. до н.э. В сентябре проведены также спасательные раскопки в районе села Лусакерт.

По историографии в 2019 г. исследованы культ света в местности Этиуни. Продолжилось историко-демографическое изучение исторического Тайка и прилегающих к нему местностей, исследованы количество беженцев в Александропольском уезде в 1914-1918 гг., проблемы возникшие с их принятием и их социальное положение. Отдельно исследованы разные восприятия истории Александропольского уезда в 1918-1920 гг., в научный обиход вошли множество архивных материалов, относящихся к культурно-образовательной жизни уезда, доскональным изучением периодической прессы выявлен новый культурный слой армянской освободительно-идеологической борьбы. Представлены новые демографические данные о изменении количества населения в начале XXI века, о половом возрастном составе, о естественном приросте и миграционных изменениях в Ширакском марзе.

По этнографии- в 2019 г.обратились к игровой культуре Александрополя, представлена роль и значение игры в процессе взросления и социализации детей, анализарованы социорегулирующие функции игр и их отношения в церемониях праздничных обрядов, исследованы армянские народные праздники, обычаи, верования и современные видоизменения культуры празднеств в Шираке, осуществлены собирательные работы в разных селах Ашоцкой области Ширакского марза, исследованы жанровые и музыкально-типологические особенности городских народных песен.

По филологии- в 2019 г. исследованы своеобразные проявления фольклорного языкового мышления в литературной среде, рассмотрены морфологические изменения современного гюмрийского говора.

В 2019 г. в Центре в рамках проводимой программы в общем расчете было опубликована 1 сборник народных песен (40стр.), 22-ой том периодического сборника Центра “Научные труды” (306 стр.), сборник материалов 10-ой международной конференции “Историко-культурное наследие Ширака: современные вопросы арменовдения” (534 стр.), 51 научные статьи (10 зарубежом), сделано 28 докладов (4 зарубежом).

Провели 10-ую международную конференцию “Историко-культурное наследие Ширака: современные вопросы арменоведения” с 149 участниками (25 зарубежных), были проведены раскопки 3-х археологических памятников, 2 этнографические экспедиции, 23 научных семинара. Действовали двухязычный сайт (www.shirakcenter.sci.am) Центра и страница на фейсбука, с подробной информацией о научной, научно-организационной и издательской деятельности Центра.

Директор Центра А. Айрапетян

Научный секретарь А. Акопов

**3. Результаты полученные тематическим финансированием в 2019 г.**

С сентября 2018 г. в Центре выполняются две темы с двухгодичным сроком, прошедшие по конкурсу “Программа поддержки научных исследований, проводимых в научных организациях Ширака” Государственного комитета науки НАН РА. По программе первого года “Реалии 1918-20 гг. в контексте исторической памяти населения Ширака” (рук. к.ист.н. К. Базеян) группа провела поисковые и собирательные работы, исследовала имеющуюся литературу по теме в Национальном архиве Армении, в фондах музеев литературы и искусства имени Егише Чаренца, а также в государственном архиве Батуми, подчиняющемуся Аджарскому правительству. Проведены полевые собирательные работы в селах Ашоцкой, Ахурянской, Амасийской областей Ширакского марза и в городе Гюмри, параллельно чему проведены фиксирование местностей, относящихся к конкретным случаям, связанных с темой, подготовлены и предúявлены к публикации 2 научные статьи.

В рамках мероприятий предусмотренных по программе темы “Демографические процесы в Александрапольском уезде в первом 20-летии 20-го века” научной темы (рук. к.ист.н. А. Айрапетян) были проведены собирательные и аналитические работы о демографическом состоянии Александропольского уезда в 1900-1918 гг. в соответствующих фондах Национального архива Армении, в частности о распределении и состоянии на территории Александропольского уезда западноармянских беженцев спасенных от геноцида в годы Первой мировой войны. Серьезным образом исследованы причины первой оккупации уезда турецкими войсками (май-ноябрь 1918 г.), особенности административно-демографической политики, проводимой турецкими захватчиками. Опроверглась точка зрения. принятая в Арменоведении, что с мая по ноябрь 1918 г. в Александропольском уезде, оккупированном турками, погибло 12000 и взято в плен 6000 человек. Сопоставлением архивных документов, воспоминаний современников и сообщений периодической печати было доказано, что в течении турецкого господства в Александрополе, селах восточного Ширака и Памбака было убито 20000 человек, 6000 погибло от голода и эпидемий и еще 15000 безвозвратно взято в плен.

Подготовлено и предúявлено к публикации 8 научных статей.

Директор А. Айрапетян

Научный секретарь А. Акопов

# ANNUAL REPORT
## on the Main Results of Scientific Researches and Activities of NAS RA Shirak Center for Armenological Studies in 2019

1. **Among the Center's main outcomes in 2019, we can single out the following ones:**

In the scope of the scientific theme **"Shirak's Archaeological and Historio-Ethnographical Survey-2"**/sup.: PhD in Hisory -A. Hayrapetyan/.

a. During the excavation of Mets Sepasar's excavation site, monuments have been discovered symbolizing the thunder of god and the goddess of fertility, whose ritual sacrifice was donation-sacrifice for human, animal and soil fertility in the natural and uninterrupted course of the world.
b. The excavations of the Jrapi necropolices gave new material to the study of the early Iron Age coastal areas of the Akhuryan coast, the generality of habitat location, tomb-dwelling affinity, population density, high economic levels, forms of burial, ritual, material and spiritual culture.
c. In the course of the excavations carried out at the eastern part of the Azatan castle-settlement-necropolis, with joint Armenian-German expedition group, there were discovered broken pottery and glasses of high quality typical of the Achaemenid period which let us assume that during the rise of the Achaemenid kingdom the elite part of Azatan dwellers has tried to adopt the lifestyle of the invaders.
d. The dominant view existing in the Oriental Studies was completely denied that most of the tribes of the north-eastern half of the Armenian Highland had pre-Urartian and Urartian periods of Khurian origin or were descendants of the Khurian-Urartian tribes and even had amount. The toponomic data and the reflections on the cult of these reflect the Indo-European origin of the local population.

**2.The Main Results of 2019 Funded by Basic Funding**

In 2019 Shirak Center for Armenological Studies of NAS RA carried on scientific and research project **"Shirak's Archaeological and Historio-Ethnographical Survey-2"**/sup.: PhD in Hisory -A. Hayrapetyan/.

**In the scope of Archaeology Survey**- In 2019 excavations were made in the archaeological monument of early bronze age origin in Mets Sepasar, Jradzor and Tavshut. The rescue excavations of the Jrapi sinking necropolis were successfully completed. The group in with Armenian-German joint expedition has made excavations in the area of Azatan castle-settlement-necropolis XIII-VIII BC. In September, rescue excavations were also carried out in the Early Bronze Age nature site in the Lernakert village area of the province.

**In the scope of Historiology Survey**- In 2019 investigations have been made on the study of the Etiuni sites of light cult, Armenian-Minor Asia relations, cult bonds the commonalities observed in symbols.

Historical and demographic studies of historical Tayk and the surrounding areas were continued, the issues dealing with the number of refugees passing through the province of Alexandrapol in 1914-1918, the distribution of newcomers as well as the problems of migration period as well as the social status of migration have been studied.

Different perceptions of History in the province of Alexandrapol in 1918-1920 are under of special scientific analysis, a large amount of archival material concerning the social and educational life of the province has been put into circulation; with the thorough study of the periodical press a new culturological layer of symbolizing Armenian liberal-ideological struggle has been opened. New data have been presented on socio-economic and structural changes in region's settlements, revealing the peculiarities of current ethno-demographic processes in the region. The process of population change, gender composition, natural reproduction and migration has been analyzed.

**In the scope of Ethnography Survey**-In 2019 the game culture of Alexandrapol has been presented, an attempt has been made to show the role and meaning of games in the process of a child's maturation and socialization, the social-regulating functions of the game and its relationship to the ceremonial ritual have been analyzed.

Modern transformations of Shirak folk fituals and holidays, carnival culture in the commentation of unique Armenian culture and the current developments in Shirak have been implementing. Field work has been carried out in different communities of Ashocq of Shirak region, the genric and musico-typological pecularities of folk songs have been studies, the genric and musico-typological pecularities of folk songs have been studied.

**In the Scope of Folklore Studies**- In 2019 the unique manifestations of folk linguo-thinking have been studied in the context of literary environment, the morphological statements of Gyumri's modern dialect have been studied in the historical development.

In 2019 in the implementing programs of the Center the following works have been published: 1 collection book of folk songs /40 pages/, two volumes of the 22$^{th}$ periodical /306p./, 10$^{th}$ collection work of international conference of "Historical and Cultural Heritage of Shirak: Modern Issues on Armenology"/534p./, 51 scientific articles /10 abroad/, 28 reports of conference participation /4 abroad/.

The 10th international conference was held entitled ‘Historical and Cultural Heritage of Shirak: Contemporary Issues on Armenology’ with 149 participants, among them 25 were from abroad; 3 excavations of old places, 2 ethnographic expeditions and 23 scientific seminars.

The two-language website (www.shirakcenter.sci.am) and the Facebook page were posted on the Internet with detailed information on the scientific, scientific-organizational and publishing activities of the Center.

Director of Shirak Center for Armenological Studies NAS RA — A. Hayrapetyan

Scientific Secretary — A. Akopov

### 3. The Results Got by Means of Thematic Financing in 2019

Since 2018 September, the Center has been implementing a two-year theme by the Science Committee of the Ministry of Education and Science of the Republic of Armenia "Scientific Research Assistance Program in Shirak Region Scientific -2018". **"From 1918 to 1921, Realities in the Context of Historical Memory of Shirak Population"**/ sup. K. Bazeyan / in the first year the scientific theme the research group has studied the available literature and carried out collective work in the National Archive of Armenia. The funds of Literature and Art Museums after Yeghishe Charents, as well as in the state archive of Batumi attached to the government of Ajaria. Field work has been done in the villages of Shirak region –Amasia, Ashocq, Akhuryan amd in Gyumri town, and was the registration of sites related to the specific cases related to the subject and 2 scientific articles were prepared for publication.

**"Demographic Processes in the Alexandropol Territory in the First Twentieth of 20$^{th}$ Century"**/sup.: PhD in Hist. Sc. A.Hayrapetyan/ analysis of academic literature has been made in the National Library of the Republic of Armenia, search and collection of materials planned in the National Archives of Armenia, as well as the study of Armenian press.

In the corresponding funds of the National Archives of Armenia, the research team carried out the 1900-1918 study of the Alexandrapol Province Collection and analysis of archive material related to demographic situation. Much work has been done in the early years of the World War II on the collection and analysis of archival materials related to the demographic situation of the province after the displacement and immigration of the Armenian-populated Western Armenian immigrants from the genocide. Serious steps were taken to investigate the reasons for the first military seizure of the province by the Turkish troops (May-November 1918), and to study the particularities of sub-demographic politics pursued here by the Turkish conquerors. The view in the Armenian Studies that the 1918 Genocide was not rejected. In May-November, 12,000 people were killed and 6,000 captured in the Alexandrapol province by the Turks. A combination of archival credentials, memoirs of contemporaries, and press releases proved that during the Turkish occupation of Akselshandropol, Nearly 20,000 people have been killed in eastern Shirak and Pambak villages, 6,000 have died of hunger and disease worldwide, and another 15,000 have been captured. Eight scientific articles were prepared and published during the reporting period.

| | |
|---|---|
| Director of Shirak Center for<br>Armenological Studies NAS RA | A. Hayrapetyan |
| Scientific Secretary | A. Akopov |